# ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Պատմ. գիտ. դոկտոր Մ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

*Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակը, որով սկզբնավորվեց նոր, կոմունիստական դարաշրջանը, XX դարի գլխավոր իրադարձությունը հանդիսացավ։ Հեղափոխության կարևորագույն նվաճումներից մեկը ազգային հարցի փայլուն լուծումն էր։ Սովետական Միությունում «ապահովվել է բոլոր ազգերի ու ազգությունների փաստական հավասարությունը հասարակության կյանքի բոլոր ոլորտներում, ծաղկել է ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, հաստատվել է աշխատավոր մարդկանց իսկական եղբայրություն՝ անկախ նրանց ազգությունից, եղբայրություն, որը զոդված է արմատական շահերի, նպատակների և մարքս-լենինյան գաղափարախոսության ընդհանրությամբ»[1]։*

*Հոկտեմբերյան հեղափոխությունը, որ արմատապես փոխեց ողջ մարդկային հասարակության զարգացման ընթացքը, կարևորագույն պատմական շրջադարձ հանդիսացավ նաև ազգային հարցի լուծման բնագավառում, ազգային ճնշումը ոչնչացնելու և ժողովուրդների իրավահավասար համագործակցություն հաստատելու բնագավառում.*

*Շահագործողական բոլոր հասարակարգերում ազգային ճնշումը բազում դարերի ընթացքում եղել է սոցիալական անհավասարության ամենաաղաղակող արտահայտություններից մեկը։ Առանձնապես խստորեն այն արտահայտվել է իմպերիալիզմի դարաշրջանում։ Լենինն ասում էր, որ իմպերիալիզմը ազգերի մեծագույն ճնշողն է։*

*Ահա թե ինչու ստրկացված ժողովուրդների պայքարը հանուն իրենց ազատության միշտ հանդիսացել է շահագործող դասակարգերի դեմ աշխատավոր զանգվածների մղած ընդհանուր ազատագրական պայքարի բաղկացուցիչ մասը։ Սակայն ոչնչացնել ազգային ճնշումը և ձեռք բերել ազատ ժողովուրդների լիակատար իրավահավասարություն ի վիճակի է միայն բանվոր դասակարգը, որի պատմական միսիան է կապիտալիզմի ոչնչացումը և կոմունիստական հասարակարգի ստեղծումը, մի հասարակարգի, որը մարմնավորում է սոցիալական արդարությունը և աշխատավոր մարդկանց հավասարությունն ու եղբայրությունը։*

*Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները, մշակելով պրոլետարիատի գիտական աշխարհայացքը, մեծ ուշադրություն էին դարձնում ազգային հարցին, ուսուցանում էին, որ ազգային ճնշումը կարելի է ոչնչացնել միայն մարդու կողմից մարդուն շահագործելը ոչնչացնելու հիման վրա։ Հոչակավոր «Կոմու-*

---

*1 ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թվականի հունվարի 31-ի որոշումը «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին», «Սովետական Հայաստան», 1 փետրվարի, 1977։*

նիստական մանիֆեստում» Մարքսը և Էնգելսը գրում էին. «Ինչ չափով որ ոչնչացվելու է մի անհատի շահագործումը մյուսի կողմից, այն չափով էլ ոչնչացվելու է մի ազգի շահագործումը մյուսի կողմից»[2]։

Ազգային հարցը առանձնապես ակտուալ նշանակություն ուներ բոլշևիկների կուսակցության համար, որի գործունեությունը ծավալվում էր բազմազգ Ռուսաստանում, ուր բնակչության կեսից ավելին կազմում էին ճնշված ազգային փոքրամասնությունները, իսկ ազգամիջյան հարաբերությունները խիստ լարված բնույթ ունեին։ Ցարիզմի և իմպերիալիզմի դեմ բոլոր ազգերի աշխատավորների միասնական հեղափոխական ճակատի ստեղծումը, բուրժուական նացիոնալիզմին պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հակադրումը հանդիսանում էր բոլշևիկների կարևորագույն խնդիրներից մեկը։

Սակայն այդ խնդրի կատարման համար անհրաժեշտ էր մշակել կուսակցության՝ գիտականորեն հիմնավորված մարքսիստական ազգային ծրագիրը և այդ ծրագրի դրոշի շուրջը համախմբել ողջ երկրի բոլոր ազգությունների հեղափոխական ուժերը՝ հանուն բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխության իրականացման։ Դեռևս ՌՍԴԲԿ II համագումարի ընդունած կուսակցության ծրագրում առաջ էր քաշված պետության մեջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման ծրագրային պահանջը։

Բոլշևիկյան կուսակցության առաջնորդ Վ. Ի. Լենինը, հենվելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հիմնարար գաղափարների վրա, երկրում հեղափոխական նոր վերելքի տարիներին բազմակողմանիորեն մշակեց բոլշևիկյան ազգային ծրագիրը, որը հաշվի էր առնում ազգային հարցի կոնկրետ պայմաններն ու առանձնահատկությունները Ռուսաստանում։ Այդ ծրագիրն ընդգրկում էր հետևյալ չորս հիմնական դրույթները. ազգերի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև պետականորեն անջատվելը, մարզային ավտոնոմիա այն ազգերի համար, որոնք կցանկանան մնալ միասնական պետության կազմում, բոլոր ազգերի և լեզուների լիակատար հավասարություն, բոլոր ազգերի աշխատավորների միասնական պրոլետարական կազմակերպություններ։ Լենինյան այս ծրագրային դրույթները հետագայում հավանության արժանացան բոլշևիկների կուսակցության 1917 թ. յոթերորդ (Ապրիլյան) կոնֆերանսում և այդ ժամանակից ի վեր դարձան նրա պաշտոնական ազգային ծրագիրը, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարի մի հզոր զենքը։ Այդ ծրագրի դրոշով լենինյան կուսակցությունը համախմբեց Ռուսաստանի բոլոր ազգերի հեղափոխական ուժերը և ապահովեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը։

Սովետական կարգերի հռչակումից անմիջապես հետո կոմունիստական կուսակցությունը ձեռնամուխ եղավ իր ազգային ծրագրի իրականացման գործին։ 1917 թ. նոյեմբերի 15-ին հրապարակվեց Լենինի ստորագրած «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որը հռչակեց ժողովուրդների լիակատար իրավահավասարությունը պետական և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում և մեր երկրի ամեն մի ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև պետականորեն անջատվելը։ Պատմական հսկայական նշանակություն ունեցող այդ փաստաթղթում շարադրված էին

2 «Կոմունիստական մանիֆեստ», Երևան, 1973, էջ 79։

Սովետական հանրապետության ազգային քաղաքականության հետևյալ հիմնական սկզբունքները.

1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունը և սուվերենությունը,

2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև անջատումը և ինքնուրույն պետություն ստեղծելը,

3. Բոլոր և ամեն կարգի ազգային ու ազգային-կրոնական առանձնաշնորհումների և սահմանափակումների վերացումը,

4. Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և էթնիկական խմբերի ազատ զարգացումը[3]։

«Դեկլարացիան» հիմք դրեց սովետական իշխանության մի ամբողջ շարք գործնական միջոցառումների։ Մասնավորապես, դեկրետներ հրապարակվեցին Լեհաստանի ու Ֆինլանդիայի պետական անկախության ճանաչման մասին։ Պետական անկախություն ստացան նաև Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի ժողովուրդները։ Հետագայում Ուկրաինայում, Բելոռուսիայում, Ադրբեջանում, Հայաստանում, Վրաստանում կազմավորվեցին սուվերեն սովետական հանրապետություններ, իսկ Լեհաստանում, Ֆինլանդիայում և Մերձբալթյան երկրներում ռեակցիոն դասակարգային ուժերին, միջազգային իմպերիալիզմի օգնությամբ, հաջողվեց ճնշել աշխատավորական զանգվածների հեղափոխական կամքը և ստեղծել բուրժուա-նացիոնալիստական պետություններ։

Նախկին Ռուսական կայսրության մի շարք այլ ճնշված ժողովուրդներ (Մերձվոլգյան շրջանների, Սիբիրի, Հյուսիսային Կովկասի և այլն) սովետական իշխանությունից ստացան տերիտորիալ ավտոնոմիայի տարբեր ձևեր. սուվերեն սովետական հանրապետությունների կազմում ստեղծվեցին ավտոնոմ հանրապետություններ, ավտոնոմ մարզեր և ազգային օկրուգներ։ Սովետական հանրապետություններում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունները լիակատար իրավահավասարություն ստացան տնտեսական, սոցիալ-քաղաքական և կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում և ազատ զարգացման, սոցիալիստական հեղափոխության ընձեռած բոլոր իրավունքներից օգտվելու հնարավորություն ձեռք բերեցին։

Մեր երկրում ազգային հարցի գործնական լուծման ճանապարհին կարևորագույն մի հանգուցակետ եղավ 1922 թ. վերջին Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ՍՍՀՄ) ստեղծումը, որպես ֆեդերատիվ պետություն, որը կազմավորված է իրավահավասար սովետական հանրապետությունների ինքնակամ միավորման հիման վրա։

Միացյալ բազմազգ սովետական պետություն ստեղծելու գործի ոգեշնչող և կազմակերպիչ Վ. Ի. Լենինը գրում էր. «Մենք ցանկանում ենք ազգերի կամավոր միություն,— մի այնպիսի միություն, որը թույլ չտա մի ազգի որևէ ճնշումը մյուսի նկատմամբ,— մի այնպիսի միություն, որը հիմնված լինի լիակատար վստահության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համաձայնության վրա»[4]։

Հենց այդպիսի մի պետական միավորում էր Սովետական Միությունը, որի ստեղծումը պատմական զարգացման օբյեկտիվ ընթացքի օրինաչափ ար-

---

3 Տե՛ս «Документы внешней политики СССР», М., 1957, т. I, էջ 15։

4 В. И. Ленин, ПСС, т. 40, էջ 43։

դյունքն էր և համապատասխանում էր սովետական բոլոր ժողովուրդների կենսական շահերին։ Իրավահավասար ժողովուրդների կամավոր պետական միավորման՝ ՍՍՀՄ-ի կազմավորումը բխում էր մեր երկրի բոլոր ժողովուրդների ձգտումից՝ միավորել իրենց ուժերն ու ռեսուրսները սոցիալիզմի կառացման համար։ Բացահայտելով ՍՍՀՄ ստեղծման նախօրյակին սովետական հանրապետություններում ծավալված միավորման շարժման օրինաչափությունը և դրա իսկական դեմոկրատական ու ինտերնացիոնալիստական բնույթը, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ առանց սովետական ժողովուրդներին մեկ միասնական պետության մեջ սերտորեն միավորելու անկարելի է պաշտպանել նրանց ինքնուրույն գոյությունը համաշխարհային իմպերիալիզմի առկայության պայմաններում և ստեղծել սոցիալիստական հասարակարգ։ ՍՍՀՄ ստեղծման տենդենցի գլխավոր արտահայտողը, այդ առաջադիմական պրոցեսի առաջատար ուժը կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող բանվոր դասակարգն էր։

1922 թ. դեկտեմբերի 30-ին Սովետների համամիութենական առաջին համագումարը միաձայն ընդունեց երկու պատմական փաստաթուղթ՝ ՍՍՀՄ կազմավորման Պայմանագիրը և Դեկլարացիան, որոնք օրենսդրական կարգով հաստատեցին մեկ միասնական միութենական պետության մեջ սովետական հանրապետությունների կամավորաբար միավորվելը։ Այդ ժամանակ ՍՍՀՄ-ն կազմավորվեց որպես իրավահավասար չորս հանրապետությունների (ՌՍՖՍՀ, Ուկրաինական ՍՍՀ, Բելոռուսական ՍՍՀ և Անդրկովկասի ՍՖՍՀ) ֆեդերատիվ պետություն։ Այդ նշանակում էր, որ պատմության մեջ առաջին անգամ ստեղծվել է բազմազգ պետության սկզբունքորեն մի նոր տիպ, պետություն, որը հենված է կամավորության, ժողովուրդների հավասարության և եղբայրության սկզբունքների վրա։ «...Մեր միությունը, մեր նոր պետությունը,— ասում էր Լենինը,— ավելի ամուր է, քան ճնշման վրա հիմնված իշխանությունը, որը կեղծիքով ու երկաթով է միավորում իմպերիալիստներին անհրաժեշտ արհեստական պետական կազմավորումները»[5]։

Հետագա տարիներին ՍՍՀՄ ազգային-պետական շինարարությունը ստացավ նոր զարգացում։ 1924 թ. կազմավորվեցին Թուրքմենական և Ուզբեկական, իսկ 1929 թ.՝ Տաջիկական միութենական հանրապետությունները։ 1936 թ., հաղթանակած սոցիալիզմի նոր սովետական սահմանադրության ընդունման կապակցությամբ, Ղազախական և Կիրգիզական ավտոնոմ հանրապետությունները վերակազմավորվեցին որպես միութենական հանրապետություններ։ Նույն այդ ժամանակ էլ, Անդրկովկասյան ՍՖՍՀ վերացման հետևանքով, Ադրբեջանական, Հայկական և Վրացական սովետական հանրապետությունները անմիջականորեն մտան ՍՍՀՄ կազմի մեջ։ 1940 թ. Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի աշխատավորները, հեղափոխական պայքարի շնորհիվ իրենց մոտ վերականգնելով սովետական իշխանությունը, ինքնակամ կերպով մտան ՍՍՀՄ կազմի մեջ որպես միութենական հանրապետություններ։ Այդ նույն թվականին, մոլդավական ժողովրդի վերամիավորման շնորհիվ, Մոլդավական Ինքնավար Հանրապետությունը վերակազմավորվեց որպես միութենական հանրապետություն։

---

[5] В. И. Ленин, ПСС, т. 35, էջ 287—288։

Սովետական Ֆեդերացիայի շրջանակներում, բացի միութենական հանրապետություններից, ինչպես ասվեց վերևում, ձևավորվեցին նաև ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ազգային օկրուգներ։ Այժմ ՍՍՀՄ-ն ներկայացնում է 15 միութենական հանրապետությունների, 20 ինքնավար հանրապետությունների, 8 ավտոնոմ մարզերի և 10 ազգային օկրուգների եղբայրական պետական միավորում։

Կոմունիստական կուսակցությունը ոչ միայն հռչակեց ժողովուրդների լիակատար իրավահավասարությունը, այլև իր X, XII համագումարների, Սովետների մի շարք համագումարների որոշումներում մշակեց մեր ժողովուրդների՝ անցյալից ժառանգած փաստական անհավասարության ոչնչացման ընդարձակ ծրագիր։

Ինչպես հայտնի է, ցարական Ռուսաստանի ճնշված ժողովուրդները, որոնցից շատերը հեղափոխությունից առաջ գտնվում էին զարգացման տոհմանահապետական կամ ֆեոդալական փուլում, խստորեն ետ էին մնում ռուս ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման մակարդակից։

Իրականացնելով լենինյան ազգային քաղաքականությունը, մեր կուսակցությունը ելնում էր այն բանից, որ ազգային շրջաններում անհրաժեշտ է ստեղծել արդյունաբերական օջախներ և ազգային բանվոր դասակարգ, բոլոր ազգությունների աշխատավորներին մասնակից դարձնել երկրի քաղաքական և տնտեսական ղեկավարման գործին, ազգային հանրապետություններում ստեղծել ազգային դպրոցների լայն ցանց, պատրաստել ազգային ինտելիգենցիա, պայմաններ ստեղծել բոլոր ժողովուրդների ազգային կուլտուրաների զարգացման համար։ Այս բոլոր միջոցառումները կյանքում իրագործելու հետևանքով, ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության ընթացքում սովետական բոլոր ժողովուրդները վերջ դրեցին իրենց նախկին հետամնացությանը և կատարյալ ծաղկման հասան տնտեսական, սոցիալ-քաղաքական ու կուլտուրական զարգացման բոլոր բնագավառներում։

Հեղափոխական մեծ վերափոխումները՝ երկրի սոցիալիստական ինդուստրացումը, գյուղատնտեսության կոլեկտիվացումն ու կուլտուրական հեղափոխությունը, արմատապես փոխեցին ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների վիճակը, պայմանավորելով նրանց փաստական անհավասարության վերացումը։

ՍՍՀՄ ժողովուրդների իրավահավասարության, նրանց եղբայրական բարեկամության և համակողմանի համագործակցության պրոբլեմը լուծվեց կոմունիստական կուսակցության երկարատև ու համառ աշխատանքի շնորհիվ, այն անհաշտ պայքարի ընթացքում, որ մղվում էր մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ, տրոցկիստների, բուխարինականների, բուրժուական նացիոնալիստների դեմ։

Լենինյան ազգային քաղաքականության իրականացման, Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ ազատագրված ժողովուրդների տնտեսական և կուլտուրական հետամնացության վերացման բնագավառում վճռական դերը պատկանում էր ռուս մեծ ժողովրդին՝ սովետական ժողովուրդների ընտանիքի մեծ եղբորը, և առաջին հերթին՝ ռուս հերոսական բանվոր դասակարգին, որի անշահախնդիր բազմակողմանի օգնությունը ՍՍՀՄ բոլոր ժողովուրդներին հնարավորություն տվեց ազատագրվել հետամնացության կապանքներից և կանգնել իսկական ծաղկման ուղու վրա։

Սոցիալիզմի կառուցման ընթացքում կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունը, ապահովելով անցյալում հետամնաց ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական ավելի արագ զարգացումը, քայլ առ քայլ առաջ էր մղում նրանց դեպի առավել զարգացած ժողովուրդների մակարդակը։

Լենինյան ազգային քաղաքականության, սովետական ժողովուրդների անխախտ բարեկամության մեծագույն ուժը իր արտահայտությունը գտավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ, ոտնատակ անելով հիտլերյան ֆաշիստների հաշիվները, բոլոր սովետական մարդիկ, ավելի քան հարյուր ազգեր ու ազգություններ, միասնական հայրենասիրական մղումով ոտքի ելան հանուն իրենց սոցիալիստական հայրենիքի պաշտպանության և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ջախջախեցին ուժեղ և խարդախ թշնամուն։

Եռապատերազմյան տարիներին շարունակվում էր բազմազգ սովետական հասարակության բուռն զարգացումը կյանքի բոլոր ոլորտներում, ավելի ու ավելի ամրապնդվում էին մեր ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը։

Տնտեսական բնագավառում ՍՍՀՄ ժողովուրդների զարգացման հսկայական թռիչքը երևում է հետևյալ թվերից. 1970 թ., 1913 թ. համեմատությամբ, արդյունաբերական արտադրանքի ծավալը ամբողջությամբ վերցրած մեր երկրում ավելացել է 92 անգամ, ըստ որում Կիրգիզիայում՝ 188 անգամ, Հայաստանում՝ 184 անգամ, Ղազախստանում՝ 146 անգամ, Բելոռուսիայում՝ 101 անգամ և այլն[6]։

Ներկայումս յուրաքանչյուր սովետական հանրապետություն ունի իր զարգացած բազմաճյուղ ինդուստրիան, որը հանդիսանում է սովետական հզոր էկոնոմիկայի օրգանական մի մասը։ Այսպես, օրինակ, արդյունաբերական արտադրանքի տեսակետից Ղազախստանը Միության մեջ արդեն գրավում է երրորդ տեղը՝ ՌՍՖՍՀ-ից և Ուկրաինայից հետո։ Այստեղ սովետական իշխանության տարիներին կառուցվել է ավելի քան 2000 ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություն։ Հայ ժողովուրդը, որ ֆիզիկական բնաջնջման վտանգից ազատվեց սովետական կարգերի հաղթանակի շնորհիվ, իր զարգացման ընթացքում հսկայական թռիչք կատարեց՝ դարավոր հետամնացությունից դեպի ժամանակակից քաղաքակրթության բարձունքները։ Հայկական ՍՍՀ-ն վերածվեց ժամանակակից զարգացած ինդուստրիայի երկրի։ Ներկայումս Հայաստանը 7,8 անգամ ավելի շատ մետաղահատ հաստոցներ է արտադրում, քան ողջ ցարական Ռուսաստանը 1913 թ.։ Արդյունաբերական արտադրանքի 15 տեսակների գծով նրա տեսակարար կշիռը կազմում է համամիութենական արտադրանքի 5-ից մինչև 35 տոկոսը։ Այդ արտադրանքի մեջ մտնում են՝ շարժական էլեկտրակայանները, ուժային տրանսֆորմատորները, կոմպրեսորները, մետաղահատ հաստոցները, տարբեր սարքավորումները, էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, ավտոմատացման միջոցները։ ՍՍՀՄ տնտեսական բալանսի մեջ նշանակալից տեղ են գրավում Հայաստանում արտադրվող պղինձը, մոլիբդենը, կարբիդը և այլն։ Հայկական ՍՍՀ արդյունաբերական արտադրանքի ավելի քան 200 տեսակներ ներկայումս արտահանվում

6 «Союз равных», տեղեկագիրք, 1972 թ., էջ 9։

են 80 զանազան երկրներ[7]։ Տասներորդ հնգամյակում հանրապետության արդյունաբերական արտադրանքը աճելու է 46 տոկոսով (համամիութենականը՝ 36 տոկոսով), իսկ գյուղատնտեսության արտադրանքը՝ 24 տոկոսով (համամիութենականը՝ 16 տոկոսով)։

Հսկայական փոփոխություններ կատարվեցին սովետական հանրապետությունների գյուղատնտեսության մեջ։ Ամենապրիմիտիվ տեխնիկայի վրա հենվող բազմամիլիոն մանր տնտեսությունների փոխարեն ներկայումս մեր երկրի բոլոր շրջաններում մենք ունենք սոցիալիստական խոշոր տնտեսություններ՝ կոլտնտեսություններ ու սովխոզներ, որոնք գյուղատնտեսության բոլոր ճյուղերում օգտագործում են ամենաժամանակակից տեխնիկան և ավելի ու ավելի մեծ չափերով իրականացնում են կոմպլեքսային մեքենայացումը, քիմիացումն ու մելիորացիան։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսությունը մի միասնական փոխշաղկապված կոմպլեքս է, որի մեջ յուրաքանչյուր հանրապետություն աշխատանքի համամիութենական բաժանման բնագավառում գրավում է իր որոշակի տեղը և միասնական համապետական պլանավորման հիման վրա իր ավանդն է ներդնում կոմունիզմի կառուցման գործում։ ՍՄԿԿ XXV համագումարը նոր, հոյակապ խնդիրներ է դրել բոլոր հանրապետությունների տնտեսական զարգացման բնագավառում։

Տասներորդ հնգամյակում կուսակցության տնտեսական ստրատեգիան նախատեսում է սովետական ամբողջ բազմազգ ժողովրդի նյութական և կուլտուրական կյանքի մակարդակի անշեղ բարձրացում՝ բոլոր հանրապետությունների հանրային արտադրության դինամիկ զարգացման հիման վրա, այդ արտադրության արդյունավետության բարձրացում, գիտա-տեխնիկական առաջընթացի արագացում, աշխատանքի արտադրողականության բարձրացում ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում աշխատանքի որակի համակողմանի բարձրացում[8]։

ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրական կյանքում կատարվեցին հսկայական փոփոխություններ, որոնք արմատապես փոխեցին նրանց հոգեկան կերպարը։ Նախքան հեղափոխությունը բնակչության երեք քառորդը անգրագետ էր, իսկ Միջին Ասիայի ժողովուրդների մեջ գրագետների թիվը 2 տոկոսից էլ պակաս էր։ Մոտ 50 ժողովուրդներ չունեին անգամ իրենց գիրն ու գրականությունը։ Մեր երկրում իրականացված կուլտուրական հեղափոխությունը ժողովուրդներին ազատագրեց հոգեկան ստրկությունից և նրանց առջև լայն ուղիներ բաց արեց դեպի գիտության ու կուլտուրայի բարձունքները։ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդները իրենց մեծ եղբոր՝ ռուս ժողովրդի օգնությամբ վերջ տվեցին իրենց կուլտուրական հետամնացությանը։ Սովետական բոլոր հանրապետություններում ստեղծվեց տարրական, միջնակարգ և բարձրագույն դպրոցների, ազգային թատրոնների, կուլտուրայի պալատների լայն ցանց, սովետական երկրի ժողովուրդների լեզուներով սկսեցին հրատարակվել բազմաթիվ գրքեր, ամսագրեր ու թերթեր։ Ներկայումս մեր երկրում, համապետական մասշտաբով, հիմնականում ավարտված է անցումը համընդհանուր միջնակարգ կրթությանը։

Ազգային հանրապետություններում կուլտուրական հեղափոխության կա-

7 Տե՛ս «Коммунист» ամսագիրը, 1976, № 13, էջ 51, 53։
8 Տե՛ս ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը, Երևան, 1976, էջ 59։

բևորագույն արդյունքներից մեկը հանդիսացավ ժողովրդական նոր ինտելիգենցիայի ձևավորումը, ազգային կադրերի պրոբլեմի լուծումը։ Նախքան հեղափոխությունը Բելոռուսիայի, Ադրբեջանի, Միջին Ասիայի, Հայաստանի, Ղազախստանի, Մոլդավիայի տերիտորիայում գոյություն չունեին բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Ներկայումս այդ հանրապետությունները ծածկված են բուհերի ընդարձակ ցանցով, որոնք յուրաքանչյուր տարի տալիս են ամենաբազմազան պրոֆիլների հարյուր-հազարավոր մասնագետներ։

Միութենական բոլոր հանրապետություններում ստեղծվել են գիտությունների ակադեմիաներ, որոնք դարձել են գիտության և կուլտուրայի իսկական կենտրոններ։ Բազմաթիվ ու բազմապրոֆիլ գիտա-հետազոտական ինստիտուտները, որ գործում են բոլոր հանրապետություններում, ակտիվորեն մասնակցում են ժամանակակից գիտության ակտուալ պրոբլեմների մշակմանը։ Այսպես, օրինակ, Սովետական Հայաստանի գիտությունների ակադեմիան, որ գլխավորում է հռչակավոր գիտնական Վ. Հ. Համբարձումյանը, դարձել է մեր երկրի ճանաչված գիտական կենտրոններից մեկը։ Հանրապետությունում կա ավելի քան 100 գիտա-հետազոտական հիմնարկություն, որտեղ աշխատում են մոտ 13 հազար գիտական աշխատողներ։ Հայ գիտնականները՝ աստղագետները, ֆիզիկոսները, մաթեմատիկոսները, մեխանիկայի, բժշկագիտության, քիմիայի և այլ գիտությունների ներկայացուցիչները իրենց արժանի լուման են ներդնում ժամանակակից գիտության ակտուալ պրոբլեմների լուծման, սովետական և համաշխարհային գիտության զարգացման գործում։

Նախքան հեղափոխությունը Ռուսաստանի ժողովուրդներից շատերը չունեին կամ համարյա չունեին իրենց գիտնականները։ Մինչդեռ, 1966 թ. տվյալներով, մեր երկրում ուզբեկ գիտական աշխատողների թիվը կազմում է 7900 մարդ, ղազախներինը՝ 5300, տաջիկներինը՝ 1600, թուրքմեններինը՝ 1400, կիրգիզներինը՝ 1200, հայերինը՝ 15200, վրացիներինը՝ 13700, ադրբեջանցիներինը՝ 9800 և այլն։ 1939-ից մինչև 1966 թ. երկրում գիտական աշխատողների ընդհանուր թիվը ավելացել է 7 անգամ, այդ թվում կիրգիզներինը՝ 32 անգամ, ղազախներինը՝ 19 անգամ, թուրքմեններինը՝ 18 անգամ, ուզբեկներինը՝ 17 անգամ, տաջիկներինը՝ 12 անգամ և այլն[9]։ Վերջին տասնամյակում գիտական աշխատողների պատրաստումը ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ հանրապետություններից շատերում ավելի արագ տեմպերով է զարգացել, քան դրանից առաջ։

Փարթամորեն ծաղկել է ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Նշանավոր հաջողությունների են հասել դրականությունը, արվեստը, կինոն, թատրոնը, հրատարակչական գործը։ Ներկայումս սովետական հանրապետությունների ժողովուրդների լեզուներով հրատարակվում է հսկայական քանակությամբ ոչ միայն գեղարվեստական, այլև գիտա-տեխնիկական դրականություն։ Համաշխարհային ճանաչում են նվաճել սովետական բազմազգ գեղարվեստական գրականությունը և երաժշտական կուլտուրան։

---

9 Տե՛ս «Страна Советов за 50 лет», վիճակագրական նյութերի ժողովածու, Մոսկվա, 1967, էջ 284։

Կոմունիստական շինարարության ընթացքում ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների համատեղ ջանքերով վեր են բարձրանում մեր արդյունաբերության խոշորագույն օբյեկտները, հզոր էլեկտրակայանները և հիդրոտեխնիկական կառույցները։ Բրատսկի հիդրոէլեկտրակայանը կառուցում էին 52 ազգությունների ներկայացուցիչներ։ Ղազախստանի խոպան հողերի յուրացման գործին մասնակցում էին սովետական բոլոր հանրապետություններից եկած մարդիկ։ Կոմերիտմիության ուղեգրերով Սիբիրի, Հեռավոր Արևելքի, Միջին Ասիայի խոշորագույն նորակառույցներն են մեկնում մեր լայնածավալ երկրի բոլոր մասերում բնակվող տասնյակ հազարավոր երիտասարդներ։ Ներկայումս Բայկալ-Ամուրյան երկաթուղային մայրուղին կառուցվում է սովետական բոլոր հանրապետությունների ջանքերով։ Հայաստանի ժողովրդական կառույցի՝ 48 կիլոմետրանոց Արփա-Սևան թունելի շինարարության մեջ ձեռք-ձեռքի տված աշխատում են 29 ազգությունների ներկայացուցիչներ՝ միութենական բոլոր 15 հանրապետություններից։ Այս և բազմաթիվ ուրիշ կոմունիստական կառույցները հանդիսանում են ժողովուրդների եղբայրական բարեկամության կենդանի մարմնավորումը, նրանց ինտերնացիոնալ դաստիարակության և կուլտուրական մերձեցման հիանալի դպրոցը։

Հաղթանակած սոցիալիզմի հիման վրա մեր երկրում առաջացան նոր, սոցիալիստական ազգեր, որոնք իրենց սոցիալ-քաղաքական ու կուլտուրական որակով, իրենց նպատակներով ու խնդիրներով արմատապես տարբերվում են բուրժուական ազգերից։ Սոցիալիստական ազգերը ազատ են անտագոնիստական դասակարգային հակասություններից։ Նրանք ներքնապես մոնոլիտ են ու միասնական՝ բարոյա-քաղաքական տեսակետից։ Նրանց խորթ է թշնամանքի զգացմունքը դեպի այլ ազգերը, նրանց համար բնորոշ են ինտերնացիոնալիզմը, սովետական բոլոր ժողովուրդների և աշխարհի բոլոր ժողովուրդների նկատմամբ տածած բարեկամության և համագործակցության ձգտումը։ Սոցիալիստական ազգերին ղեկավարող և ուղղություն տվող ուժը կոմունիստական կուսակցությունն է։

Այն ամենը, ինչ ազգամիջյան փոխհարաբերությունների բնագավառում ձեռք է բերվել սովետական երկրի փառապանծ 60-ամյա պատմության ընթացքում, վկայում է, որ «...ազգային հարցը այն տեսքով, ինչպես նա մեզ հասավ անցյալից, լուծված է լիակատար կերպով, լուծված է վերջնականապես և անդառնալիորեն։ Դա մի նվաճում է, որը իրավամբ կարելի է նույն շարքը դասել ՍՍՀՄ-ում նոր հասարակարգի կառուցման այնպիսի հաղթանակների հետ, ինչպիսիք են ինդուստրացումը, կոլեկտիվացումը, կուլտուրական հեղափոխությունը»[10]։

Սոցիալիստական ազգերի և ազգամիջյան փոխհարաբերությունների հիմնական օրինաչափությունը, որ բնորոշվում է մեր հասարակարգի բնույթով, հանդիսանում է ամեն մի ազգի համակողմանի զարգացումը և ազգերի անշեղ մերձեցումը։ Այդ երկու առաջադիմական տենդենցների՝ ազգերի ծաղկման ու մերձեցման դիալեկտիկական փոխազդեցությունը որոշում է սովետական բազմազգ հասարակարգի հետագա զարգացման օբյեկտիվ ընթացքը, հանդիսանում է ազգամիջյան փոխհարաբերությունների հետագա զարգացման հիմնական առանցքը։

---

10 Լ. Ի. Բ ր ե ժ ն և, ՍՍՀՄ 50-ամյակի մասին, Երևան, 1973, էջ 16։

Սոցիալիստական ազգերի և ազգությունների մերձեցման պրոցեսը բնորոշվում է նրանց կյանքի բոլոր կողմերի ինտերնացիոնալացմամբ, հանրապետությունների տնտեսական համագործակցության խորացմամբ, միասնական սոցիալիստական էկոնոմիկայի շրջանակներում նրանց փոխադարձ օգնության ընդարձակմամբ, սովետական ողջ հասարակության բարոյա-քաղաքական միասնության հետագա ամրապնդմամբ։ Կատարվում է ՍՍՀՄ ժողովուրդների ազգային կուլտուրաների արագ փոխազդեցություն և փոխհարստացում, կուլտուրական նվաճումների փոխանակում՝ ազգային կուլտուրայի, կինոյի տասնօրյակների միջոցով, փառատոների, գեղարվեստական ցուցահանդեսների փոխանակման ճանապարհով, եղբայրական ժողովուրդների գրականության թարգմանության եղանակով, ամեն տեսակի հանդիպումների, համատեղ սիմպոզիումների, գիտական կոնֆերանսների միջոցով և այլն։ Ազգային կուլտուրաների փոխադարձ ազդեցության և փոխհարստացման գործում կարևորագույն դեր է խաղում ռուսերենը՝ ազգամիջյան փոխհարաբերությունների լեզուն, որը մի շարք օբյեկտիվ պատճառների հետևանքով դարձել է բոլոր ոչ ռուս սովետական մարդկանց երկրորդ մայրենի լեզուն։ Ռուսաց լեզուն միաժամանակ հանդիսանում է մի հզոր գործոն մեր ժողովուրդների կուլտուրայի զարգացման համար, սովետական և համաշխարհային գիտության ու կուլտուրայի նվաճումներին նրանց հաղորդակից դարձնելու համար։

Սոցիալիստական ազգերի ծաղկման և մերձեցման պատմական պրոցեսը կատարվում է ոչ թե ինքնահոսով, ոչ թե տարերային զարգացման եղանակով, այլ կոմունիստական կուսակցության ակտիվ կարգավորող ուժի առկայության պայմաններում։ Կուսակցությունը, որ սովետական հասարակարգի ղեկավարող ուժն է, ազգամիջյան հարաբերությունների բնագավառն է ներմուծում գիտակցականության, կազմակերպվածության և նպատակասլացության սկզբունքները։

Իմպերիալիզմի այնպիսի գաղափարախոսներ, ինչպիսիք են՝ Ու. Ռոստոուն, Լ. Սնայդերը, Ռ. Արոնը, Ռ. Պիրսը, Բ. Մեյսները և ուրիշներ, անկարող լինելով ժխտել ՍՄԿԿ ազգային քաղաքականության փայլուն հաջողությունները, դիմում են ամեն կարգի կեղծարարությունների։ Նրանք, մասնավորապես, ճգնում են «ապացուցել», որ իբր ՍՍՀՄ-ում չկա ժողովուրդների իսկական հավասարություն, իսկ ազգային հանրապետությունների սուվերենությունը որպես թե ձևական բնույթ է կրում։ Այսպես, ամերիկյան պատմաբան Լ. Սնայդերը հայտարարում է, թե «զերազգային Սովետական Միությունը հիմնվել է ոչ թե ազգերի ինքնորոշման սկզբունքով, այլ ձնշման տակ»[11]։

Կատաղի հակակոմունիստները կաշվից դուրս են գալիս ապացուցելու համար, թե իբր սովետական կոմունիստները իրականացնում են ազգալուծման քաղաքականություն, ձգտում են ռուսիֆիկացման ենթարկել բոլոր ոչ ռուս ազգերին, ոչնչացնել նրանց ազգային առանձնահատկությունները, ազգային կուլտուրան, լեզուն, ավանդույթները և այլն։

Իդեոլոգիական այդպիսի դիվերսիաների իմաստը միանգամայն պարզ է. նպատակ է դրվում անվանարկել սոցիալիզմը և պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները, խախտել մեր ժողովուրդների եղբայրական

---

11 «Вопросы истории КПСС» ամսագիր, 1973, № 10, էջ 79։

բարեկամությունը, նրանց գիտակցության մեջ վերակենդանացնել նացիոնալիզմի վերապրուկները, նրանց հակադրել միմյանց և միաժամանակ թուլացնել լենինյան ազգային քաղաքականության ձգողական մեծ ուժը՝ իմպերիալիզմի դեմ պայքարող ճնշված ժողովուրդների համար։

Սակայն հակակոմունիզմի գաղափարախոսներին կեղծիքի և բամբասանքի օգնությամբ չի հաջողվի ժխտել այն մեծ ճշմարտությունը, որ մեր երկրում հաղթանակել է լենինյան ազգային քաղաքականությունը։ Սովետական բոլոր ժողովուրդների լիակատար իրավահավասարությունը, նրանց իրավունքների անձեռնմխելիությունը ապահովված են ՍՍՀՄ սահմանադրությամբ, որտեղ ասված է, որ «ՍՍՀՄ քաղաքացիների իրավահավասարությունը, անկախ նրանց ազգությունից և ռասայից, տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, հանդիսանում է անխախտելի օրենք»։ Մեր երկրի պետական կառուցվածքը և կառավարման եղանակը այնպիսին են, որ բոլոր միութենական և ինքնավար հանրապետությունները, ինքնավար մարզերն ու ազգային օկրուգները, համապատասխան չափերով, ներկայացված են պետական օրգանիզմի բոլոր օղակներում՝ ներքևից մինչև վերև։ Միութենական բոլոր հանրապետությունները պետական սուվերենության իրավունք ունեն, բացի այն դեպքերից, երբ որոշակի իրավունքներ, կամավոր կերպով, հանձնված են իշխանության համամիութենական օրգաններին։

Հետևողականորեն շարունակելով լենինյան ազգային քաղաքականությունը, մեր կուսակցությունը միաժամանակ հետևողական պայքար է մղում նացիոնալիզմի և շովինիզմի ամեն մի արտահայտության դեմ։ Նրանց դեմ մղվող պայքարում կուսակցությունը ձգտում է այն բանին, որպեսզի սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքները դառնան ամեն մի սովետական մարդու համոզմունքը, որպեսզի սովետական ժողովուրդների բարեկամությունը է՛լ ավելի ամրապնդվի։ Ինչպես մեր ողջ Միության ընդհանուր շահերը, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող ամեն մի հանրապետության շահերը մշտապես հաշվի առնելը կուսակցության ազգային քաղաքականության էությունն է։ Կոմունիստական շինարարության տնտեսական ու սոցիալական այն ծրագիրը, որ մշակվեց ՍՄԿԿ XXV համագումարի կողմից, ներծծված է սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով, նպատակամղված է դեպի Սովետական Միության բոլոր ժողովուրդների բարեկամության ու եղբայրության հետագա ամրապնդումը։

«Կուսակցական կազմակերպությունները,— նշեց ընկ. Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXV համագումարին տված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ,— անցած ժամանակաշրջանում շատ ուժեր են նվիրաբերել աշխատավորության հայրենասիրական դաստիարակությանը և միևնույն ժամանակ մասսաների ինտերնացիոնալիստական գիտակցության ամրապնդմանը։ Այս տեսակետից հսկայական դեր խաղացին ՍՍՀՄ-ի կազմավորման հիսնամյակի և Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի երեսնամյակի տոնակատարությունները... Անցած կես դարի աշխատանքային մեծագործությունների, Հայրենական մեծ պատերազմի մարտական սխրագործությունների մեջ աճեց և կոփվեց մեր երկրի բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի, ազգերի ու ազգություններին անխախտ միասնությունը։ Եվ այդ միասնությունը, բոլոր սովետական մարդկանց այդ համախմբվածությունը, իրենց մեծ հայրենիքին

նրանց նվիրվածությունը, ժողովուրդների ինտերնացիոնալիստական եղբայրությունը դարձան անցած հոբելյանների լեյտմոտիվը։ Սա էր դրանց թե՛ քաղաքական, և թե՛ դաստիարակչական հսկայական նշանակությունը։ Աշխատավորության, ամենից առաջ երիտասարդ սերնդի գիտակցության մեջ սովետական հայրենասիրության ու սոցիալիստական ինտերնացիոնալիզմի գաղափարների, սովետների երկրի համար, մեր հայրենիքի համար հպարտության գաղափարների, սոցիալիզմի նվաճումներին պաշտպան կանգնելու պատրաստակամության գաղափարների հաստատումը եղել է և մնում է կուսակցության կարևորագույն խնդիրներից մեկը»[12]։

ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թ. մայիսյան պլենումում հանդես գալով ՍՍՀՄ սահմանադրության նախագծի մասին զեկուցմամբ, ընկ. Լ. Ի. Բրեժնևը կրկին ընդգծեց, որ «ՍՍՀՄ ազգերի և ազգությունների հարաճուն մերձեցումը թելադրում է պետության միութենական հիմունքներն ամրապնդելու անհրաժեշտությունը։ Դա արտացոլված է նաև ՍՍՀՄ-ի՝ որպես միասնական միութենական բազմազգ պետության, բուն սահմանման մեջ (հոդված 69)։ Ընդհանուր միութենական հիմունքների ամրապնդումը արտացոլված է նաև նախագծի մի քանի այլ դրույթներում։ Նախագծում ամբողջությամբ վերցրած ազգային-պետական կառուցվածքի հարցերի լուծումը ապահովում է մեր բազմազգ միության ընդհանուր շահերի և այն կազմող հանրապետություններից յուրաքանչյուրի շահերի իրոք դեմոկրատական զուգակցումը, ապահովում է մեր երկրի բոլոր ազգերի և ազգությունների համակողմանի բարգավաճումն ու անշեղ մերձեցումը»[13]։

ՍՄԿԿ Լենինյան ազգային քաղաքականությունը դիմացել է պատմական փորձարկմանը և ապացուցել է իր կենսունակությունը։ Նա ձեռք է բերել հսկայական միջազգային նշանակություն։ Մեր ժամանակների ամենաբարդ սոցիալական պրոբլեմներից մեկի՝ ազգային հարցի ամենաարմատական հեղափոխական լուծման պատմականորեն առաջին փորձը և դրա փայլուն արդյունքները, բնականաբար, գիտական ու գործնական մեծ հետաքրքրություն են առաջացնում ամբողջ աշխարհում։ Այժմ արդեն օբյեկտիվորեն մտածող բոլոր մարդկանց համար պարզ է, որ Սովետական Միությունը իրենից ներկայացնում է ժողովուրդների բարեկամության կենդանի մարմնավորումը, որը ռեալ ուղիներ է նախանշում ազգային հարցի համաշխարհային լուծման ճանապարհին։

---

12 Լ. Ի. Բ ր ե ժ ն և, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության ընագավառում, Երևան, 1976, էջ 123—124։

13 Լ. Ի. Բ ր ե ժ ն և, ՍՍՀՄ սահմանադրության նախագծի մասին (Զեկուցում ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թ. մայիսյան պլենումում), «Սովետական Հայաստան», 5 հունիսի 1977 թ.։